ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 49 - 50 (16444) ՇԱԲԱԹ, 25 ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՀԱՐՑՆ Է»

Հունիսի 23-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ անցկացվեց գործադիր իշխանության հերթական նիստը, որտեղ անդրադարձան մեկնարկած նախընտրարշավին:

Ինչպես նշեց վարչապետը, ողջ ընտրարշավը, առանձնապես ընդդիմության համար պետք է լինի ապահովված: Նրա խոսքերով, ժողովրդավարական եւ թափանցիկ ընտրությունների անցկացումը կառավարության պատվի հարցն է: «Ես հանդես եկա հատուկ հայտարարությամբ այն մասին, որ առավելագույնս պետք է խուսափենք վարչական ռեսուրսի օգտագործումից: Մենք կոչ ենք անում բոլորին, առավելագույնս հանգիստ իրավիճակում արժանապատվորեն անցկացնենք այս ընտրությունները: Ցանկանում եմ ավելացնել, մեզ համար կարեւոր նշանակություն ունի ողջ այս գործընթացի թափանցիկությունը, ուստի ողջ նախընտրարշավը, առանձնապես ընդդիմության համար պետք է լինի առավելագույնս ապահովված: Բնականաբար, կառավարող ուժի ընտրարշավի թափանցիկությունը եւս մեծ նշանակություն ունի»,- հայտարարեց վարչապետը:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐԻՆ ԿՈՉ ԵՄ ԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին արտակարգ հայտարարությամբ դիմեց քաղաքական կուսակցություններին, պետական գերատեսչություններին եւ հասարակայնությանը:

Իր դիմումում վարչապետը նշում է, որ Վրաստանում պաշտոնապես մեկնարկել է նախընտրական արշավը. «Նախեւառաջ, բոլորին կոչ եմ անում կարճ ժամանակամիջոցում ընդունել նախընտրական ժամանակահատվածում քաղաքական ուժերի վարքի կոդեքսը, որին հուսով եմ, որ կմիանան մեր երկրում գործող բոլոր պատասխանատու քաղաքական ուժերը»,- նշում է վարչապետը իր դիմումում՝ հավելելով, որ երկրի օրենսդրական մարմինը արդեն քննարկում է այդ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

«ՈՍԿԵ ԳԵՂՄ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԴՈՆԱԼԴ ՌԱՄՍՎԵԼԴԻՆ

«Ռամսվելդի» հիմնադրամի եւ Ջոն Հոկինսի Կենտրոնական Ասիա-Կովկաս համալսարանի կազմակերպմամբ, CAMCA տարածաշրջանային ֆորումի շրջանակներում, աշխատանքային այցով Վրաստանում էր գտնվում ԱՄՆ նախկին պետքարտուղար, «Ռամսվելդ» հիմնադրամի նախագահ Դոնալդ Ռամսվելդը:

Հունիսի 18-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Վրաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ հարաբերությունների ուժեղացման ու խորացման գործում ներդրած անձնական ավանդի համար, «Ոսկե գեղմ» շքանշանով պարգեւատրեց Դոնալդ Ռամսվելդին, ինչպես նաեւ Khalilzad Associaates ընկերության նախագահ Զալմայ Մամոզ Խալիլզադեին:

Այցի շրջանակներում՝ Դոնալդ Ռամսվելդի հետ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԻ 8-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԸ

Վրաստանի ութերորդ գումարման խորհրդարանը հունիսի 24-ին անցկացրեց իր վերջին լիագումար նիստը: Թեպետ անհրաժեշտության դեպքում, ինչպես հայտարարեց խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին, սեպտեմբերի սկզբներին օրենսդրական բարձրագույն մարմինը կարող է անցկացնել արտահերթ նիստ:

Լիագումար նիստում խորհրդարանը 79 կողմ եւ մեկ՝ դեմ ձայներով ընդունեց ընտրական օրենսգրքում կատարվելիք փոփոխությունը, ըստ որի, Վրաստանի վարչապետից խորհրդարանական ընտրություններին մասնակցելու

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԻԶԱ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Եվրամիության անդամ երկրների արտաքին գործերի նախարարները միաձայն պաշտպանեցին Վրաստանի համար անայցեգրային պայմանակարգի ընդունումը:

Այդ մասին Լյուքսեմբուրգում հայտարարեց Եվրամիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության քաղաքականության գե-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԻ ԵՎ ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում կայացել է Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը, որից հետո նախագահներ Սերժ Սարգսյանը, Վլադիմիր Պուտինը եւ Իլհամ Ալիեւը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասված է.

«Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանական Հանրապետության նախագահները 2016թ. հունիսի 20-ին հանդիպեցին Սանկտ Պետերբուրգում՝ ՌԴ նախագահի հրավերով եւ քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը վերաբերող հարցեր:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԱՅՑ

ՀՌՈՄԻ ՊԱՊ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ. «ԳԱԼԻՍ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՂԲԱՅՐ»



Երեկ, հունիսի 24-ին եռօրյա այցով Հայաստան ժամանեց Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինը: Սրբազան քահանայապետին «Զվարթնոց Արմենիա» միջազգային օդանավակայանում դիմավորեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը:

Այսօր՝ հունիսի 25-ին, Սրբազան քահանայապետը կայցելի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, ապա կմեկնի Գյումրի, որտեղ Սուրբ Վարդանանց հրապարակում նույն օրը տեղի կունենա պատարագ: Գյումրիում նախատեսված են նաեւ մի շարք այլ միջոցառումներ, որոնց ավարտին Սրբազան քահանայապետը կվերադառնա Երեւան եւ Հանրապետության հրապարակում տեղի կունենա այցի ամենակարեւոր եւ հանրության համար ամենաբաց միջոցառումը: Կլինի խաղաղության աղոթք:

Հունիսի 26-ի առավոտյան Մայր Աթոռում բաց խորանին տեղի կունենա պատարագ, որը կմատուցի Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբազան քահանայապետի հաղորդակցությամբ, որից հետո Սրբազան քահանայապետը եւ Վեհափառ Հայրապետը կայցելեն հայ ժողովրդի եւ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու համար կարեւորագույն սրբավայրերից մեկը՝ Խոր Վիրապ, որտեղ միասին աղոթելուց հետո աղավնիներ բաց կթողնեն Արարատի ուղղությամբ եւ դրանով պաշտոնական ծրագիրը կավարտվի: Սրբազան քահանայապետը կմեկնի օդանավակայան՝ Հռոմ վերադառնալու համար:

Հռոմի Ֆրանցիսկոս պապը Հայաստան այցին ընդառաջ ուղերձ է հղել: Ուղերձում, մասնավորապես, ասված է.

«Սիրելի եղբայրներ եւ քույրեր, մի քանի օր անց ես մեծ ուրախությամբ կլինեմ ձեր մեջ, Հայաստանում:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՄՐՑՈՒՅԹ

TBC ԲԱՆԿԻ ԵՎ ՋԵՈՍԵԼԻ ԲԻԶՆԵՍ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ



TBC բանկը Վրաստանում ներկայացնում է ամենամասշտաբային բիզնես պարգեւատրումները, որի նպատակը վրացական փոքր եւ միջին գործարարության աջակցությունն է ու դրա զարգացման նպաստումը: Նախագծի գլխավոր գործընկերությունը ցուցաբերում է հեռուստահաղորդակցության Ջեոսելի ընկերությունը: Մի կողմից բիզնես պարգեւատրման նպատակն է խրախուսել հաջողակ գործարարներին եւ նրանց տալ շար-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐԻՆ ԿՈՉ ԵՄ ԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼ ՀԱՆԳԻՍՏ ՈՒ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հարցը, ինչը ողջունելի է, թեպետ նշանակալից է, որ վարքի կոդեքսում ներառված սկզբունքները ձեւավորվեն հասարակայնության լայն կոնսենսուսի հիման վրա, կոնսենսուս, որ չեն կիրարկվի բռնության մեթոդները, ատելության լեզուն, ընդդիմադիրներին վիրավորելը, արժանապատվությունը ոտնահարող գործողությունները, նաեւ կապահովվի տարբերվող կարծիքի նկատմամբ հարգանքը:

«Ցանկանում եմ դիմել պետական գերատեսչություններին, դրանց յուրաքանչյուր աշխատակցին՝ առանձնակի պատասխանատվությամբ վերաբերվեն իրենց գործողություններին, որպեսզի տեղի չունենան նրանց հնարավոր օգտագործումը որեւէ կողմի օգտին, անկախ քաղաքական համակրանքից, ծայրաստիճան նշանակալից է, որ ապահովված լինի ռեսուրսների հավասար մատչելիությունը»,- արտակարգ ուղերձում նշում է վարչապետը՝ հավելելով. «Ցանկանում եմ դիմել բոլորին՝ թույլ չտալ վարչական ռեսուրսի օգտագործում քաղաքական նպատակների համար»:

Գիորգի Կվիրիկաշվիլին իր արտակարգ ուղերձում դիմել է նաեւ «Վրացական երազանք» կոալիցիայի կողմնակիցներին. «Ես որպես կառավարող թիմի լիդեր, ցանկանում եմ դիմել մեր կողմնակիցներին: Մեր իշխանության գլխավոր ուժն ու առավելությունը մեր ընդդիմադիրների ու տարբերվող կարծիքի նկատմամբ մեր վերաբերմունքի մեջ է: Ուստի արտակարգ նշանակալից է, որ պահպանենք այս միտումը եւ թույլ չտանք, որ հարցականներ ծագեն մեր կողմից վարչական ռեսուրսի հնարավոր օգտագործման առնչությամբ: Դա մեզ պետք չէ, քանի որ առանց այդ էլ ունենք մարդկանց մեծ աջակցությունը»,- ասված է Վրաստանի վարչապետի արտակարգ դիմումում:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

«ՈՍԿԵ ԳԵՂՄ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԴՈՆԱԼԴ ՌԱՄՍՎԵԼԴԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանդիպում ունեցան նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

Հանդիպումներում քննարկվեցին Վրաստանում իրականացվող բարեփոխումների ընթացքը, գործադիր իշխանության ծրագրերը դրանց արագացման ուղղությամբ:

Նշենք, որ վերոնշյալ համաժողովին մասնակցում էին աշխարհի 18 երկրների շուրջ 150 ներկայացուցիչներ: Օրակարգում տարածաշրջանի համար նշանակալից հարցերի քննարկումն էր:

ՕՐԵՆՍԴԻՐ

ՎՐԱՍՏԱՆԻ 8-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ որպես պատգամավորության թեկնածու գրանցվելու դեպքում, չի պահանջվի պարտադիր պաշտոնաթողություն:

Նշենք, որ գործող օրենսդրության համաձայն, խորհրդարանի պատգամավորության թեկնածու գրանցվելուց առնվազն երկրորդ օրը, վարչապետը պարտավոր էր պաշտոնաթող լինել: «Խորհրդարանական ընտրություններին վարչապետի մասնակցությամբ վերջինիս պարտադիր պաշտոնաթողությունը հանգեցնում է կառավարության պաշտոնաթողությանը եւ նոր կառավարության ձեւակերպման անհրաժեշտությանը: Խորհրդարանական ընտրություններից մի քանի շաբաթ շուտ նոր կառավարության ձեւակերպումը, որը, հնարավոր է, լրիվությամբ փոխվի երկու ամսվա ընթացքում, չի համապատասխանում սահմանադրական համակարգի կայունությանը»,- կատարված փոփոխությունը, այս խոսքերով հիմնավորեց իրավաբանական հարցերով խորհրդարանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեն:

Ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների շրջանակներում, խորհրդարանը բաշխեց նաեւ անվճար գովազդային ժամանակը: Համաձայն այդ փոփոխության, ընդլայնվում է այն սուբյեկտների շրջանը, ում տրված է անվճար երթեւեկելու ժամանակից օգտվելու իրավունք: Մասնավորապես, օրինանախագծի համաձայն, անվճար գովազդային ժամանակից կօգտվեն ոչ միայն այն կուսակցությունները, որոնք համարվում են որակյալ ընտրական սուբյեկտ կամ, որոնք վերջին խորհրդարանական ընտրություններին ստացել են ընտրողների չորս եւ ավելի տոկոսի պաշտպանությունը, այլեւ՝ այն կուսակցությունները, որոնք ստանում են բյուջետային ֆինանսավորում, միաժամանակ անվճար գովազդային ժամանակի տեւողությունը, որը հատկացվում է հեռուստատեսության կողմից, չի փոխվի:

«Վրաստանի խորհրդարանը միաձայն պաշտպանեց դիվանագիտական ծառայության մասին» օրենքում փոփոխության նախագիծը, որը նախատեսում է Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններին ու դեսպանատներին առընթեր, կոմերցիոն կցորդի ինստիտուտի ստեղծումը:

Դավիթ Ուսուփաշվիլին՝ մեկնաբանելով Կորցխելիի միջադեպի հետ կապված խորհրդարանական փոքրամասնության կողմից խորհրդարանի աշխատանքին հայտարարված բոյկոտը, նշեց, որ մեծամասնությունը փոքրամասնության բացակայության պայմաններում էլ պետք է շարունակի աշխատանքը: Նրա խոսքերով, խորհրդարանի բյուրոն օրակարգում ներառել է նաեւ այնպիսի հարցեր, որոնք առաջադրվել են փոքրամասնության կողմից:

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՁԵՆ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ, ԻՍԿ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԱԼԲԱՆԴՈՎԸ՝ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Հունիսի 21-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ օրերս նորանշանակ դեսպանների հետ, որոնք Վրաստանը ներկայացնելու են Հայաստանում, Եգիպտոսում, Շվեդիայում, Ֆինլանդիայում եւ Հնդկաստանում: Համապատասխան հրամանագիրը, պետության ղեկավարը ստորագրել էր հունիսի 20-ին:

Գիորգի Սագանելիձե Ալեքսանդր Նալբանդով

Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանի պաշտոնին նշանակվել է Գիորգի Սագանելիձեն, Եգիպտոսում՝ Ալեքսանդր Նալբանդովը, Շվեդիայում եւ Ֆինլանդիայում՝ Մալխազ Կակաբաձեն, իսկ Հնդկաստանում՝ Արչիլ Ջուլիաշվիլին:

Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն 44 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի արեւելագիտության եւ իրավագիտության ֆակուլտետները:

Տարբեր տարիներին դիվանագիտական պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի ԱԳ նախարարության ԱՊՀ դեպարտամենտում, 2005-2013 թվականներին Հայաստանում Վրաստանի դեսպանության ավագ խորհրդական, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանորդ: Տիրապետում է անգլերեն եւ ռուսերեն լեզուներին, ամուսնացած է, ունի երկու երեխա:

Եգիպտոսում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Նալբանդովը 56 տարեկան է, ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ստաժավորում անցել Բուդապեշտի կենտրոնական եվրոպական համալսարանում, մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի ծրագրի շրջանակներում:

1993-1997 թվականներին զբաղեցնում էր Վրաստանում մարդու իրավունքների պաշտպանության ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի վարչության պետի պաշտոնը: Ապա պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել Վրաստանի ժողովրդական պաշտպանի, Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմերում: 2005 թվականից աշխատում է Վրաստանի արտաքին գործերի նախարարության համակարգում: Տարբեր տարիներ զբաղեցրել է Վրաստանի ԱԳ փոխնախարարի, գերատեսչության արտակարգ հանձնարարությունների դեսպանի, այլ պատասխանատու պաշտոններ, 2011-2014 թվականներին Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան՝ Սլովակիայի Հանրապետությունում, մինչեւ 2014 թվականը, միաժամանակ, հանդիսանում էր նաեւ Սլովենիայում Վրաստանի դեսպանը:

Տիրապետում է ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներին: Ամուսնացած է, ունի երկու որդի:



ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

ՀԱՆՐԱՔՎԵՆ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԵՄ-Ի Դ ՈՒՐՍ ԳԱԼԸ

Եվրամիությունից Մեծ Բրիտանիայի դուրս գալու կողմնակիցները հաղթանակ են տարել հանրաքվեում: Ինչպես վկայում են ձայների հաշվման տվյալները, Brexit-ի օգտին տրված ձայները գերազանցել են 16,7 միլիոնը: Նախնական տվյալներով՝, եվրասկեպտիկները հավաքում են ձայների 51,9 տոկոսը, իսկ նրանց ընդդիմախոսները՝ 48,1 տոկոսը:

ԵՄ-ին Մեծ Բրիտանիայի անդամակցության հարցի շուրջ հանրաքվեին ընտրողների մասնակցությունը կազմել է 72,1 տոկոս: Սա ամենաբարձր ցուցանիշն է 1997 թվականից ի վեր Մեծ Բրիտանիայի ամբողջ տարածքում անցկացված քվեարկությունների ընթացքում:

Եվրախորհրդարանի ղեկավար Մարտին Շուլցը հայտարարել է, որ Եվրամիությունից Մեծ Բրիտանիայի դուրս գալու շուրջ բանակցությունները «կսկսվեն մոտ ժամանակներս»:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ Է

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժան Մարկ Էրոն հայտարարել է, որ Եվրոպական Միությունը Ռուսաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների ժամկետը երկարաձգում է 6 ամսով:

«Այդ պատժամիջոցների ժամկետը երկարաձգվում է 6 ամսով, բայց անհրաժեշտ է քննարկում, որ եթե լինեն կոնկրետ տեղաշարժեր, հնարավոր դառնա կատարել ընդառաջ քայլ: Բայց դրա համար անհրաժեշտ է, որ ռուսներն ու ուկրաինացիները կատարեն մինսկյան համաձայնության հետ կապված աշխատանքը»,- ասել է նախարարը: Նա հույս է հայտնել նաեւ, որ այդ հարցի շուրջ քննարկումը տեղի կունենա հունիսի վերջին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԵՐԵԽԱՆԵՐԸ՝ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐԻ ՁՈՒ

«Զբոսայգի-հյուրանոց Սյամոզերո» մանկական առողջարարական ճամբարի մասնակիցները, հունիսի 18-ին նավակներով փոթորկի են ենթարկվել ջրամբարում: Կարելիայի Սյամոզերո լճում տուրիստական խմբի կազմում եղել է 51 մարդ, այդ թվում՝ 4 մեծահասակ: Հետաքննությունը հայտնել է 14 զոհված երեխաների մասին: Զոհված երեխաները 12-13 տարեկան են, զոհվածներից 11-ը տղաներ են, երեքը՝ աղջիկներ:

Սյամոզերո լճում արտակարգ պատահարի հետեւանքով տուժած 12 երեխաներ գտնվում են հիվանդանոցներում: Ընդամենը փրկվել է 37 մարդ, այդ թվում՝ 33 երեխա:

Տեղի ունեցածի փաստով քրեական գործ է հարուցվել: Հետաքննության շրջանակներում ձերբակալվել է չորս մարդ:

ԳԵՐՄԱՆԻԱ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Իրավապահները ձերբակալել են Գերմանիայի Ֆիրնհայմ քաղաքի կինոթատրոնում կրակահերթեր արձակած տղամարդուն:

Տղամարդը զենքը ձեռքին կինոթատրոն է ներխուժել տեղի ժամանակով ժամը 15:00-ին: Վկաները կրակոցներ են լսել, հաղորդվել էր, որ կան վիրավորներ: Վիրավորների թիվը տատանվում է 20-50-ի սահմաններում:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎԻԶԱ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵՑԻՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



Ֆեդերիկա Մոգերինին: «Մենք Վրաստան-Եվրամիություն հարաբերությունների ենթատեքստում քննարկեցինք Վրաստանի համար անայցեգրային պայմանակարգի ընդունումը: Եվրամիության բոլոր անդամ երկրները հստակ հաստատեցին, որ Վրաստանը, անտարակույս, կատարել է բոլոր պայմանները»,- ընդգծեց Մոգերինին:

Նրա խոսքերով, հիմա Նիդերլանդները՝ որպես նախագահող երկիր, Եվրամիության անդամ երկրների մշտական ներկայացուցիչների կոմիտեի մոտակա նիստում պետք է բարձրացնի Վրաստանի համար անայցեգրային պայմանակարգի ընդունման հարցը:

Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեն ողջունեց Եվրամիության անդամ երկրների արտաքին գործերի նախարարների՝ Վրաստանի համար անայցեգրային պայմանակարգի ընդունման մասին որոշումը: Անդրադառնալով կոնկրետ ժամկետներին, Վրաստանի ԱԳ նախարարը նշեց, որ կոնկրետ ժամկետի հայտարարումը արդարացված չէ, քանի որ բնակչության շրջանում կարող են ծագել սխալ ընկալումներ եւ, հետեւաբար, կոնկրետ ժամկետների հարցում կարող են ծագել հիասթափություններ:

ՈԼՈՐՏ

ԳՈՐԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԵՑ, ՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋՆԱՀԵՐԹԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ Է

Հունիսի 21-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում մասնակցեց Վրաստանի գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության «Միասնական ագրոնախագծերի» շնորհանդեսին:

Իր խոսքում, վարչապետը նշեց, որ գործադիրն իր գործերով հաստատեց, որ գյուղատնտեսությունը կառավարության համար հանդիսանում է գլխավոր առաջնահերթություններից մեկը: «Այս չորս տարիների ընթացքում, մարմնավորել ենք բազում կարեւոր նախագծեր, որոնք արդեն կոնկրետ արդյունքներ են տալիս: Այդ նախագծերը պարբերաբար կատարելագործվում են, ընդլայնվում եւ դրանց ավելացվում են նոր ուղղություններ: Նպատակը հետեւյալն է՝ աջակցել մեր գյուղացիների, ֆերմերների գործունեությանը, նպաստել նոր արտադրությունների եւ արտադրամասերի ստեղծմանը, տեղական արտադրության զարգացմանն ու արտահանման ծավալի մեծացմանը: Այդ ամենը գյուղում նոր աշխատատեղերի ստեղծման երաշխիքն են»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ կառավարությունն այդ հարցով ակտիվորեն համագործակցում է ինչպես մասնավոր հատվածի, այնպես էլ՝ միջազգային ու դոնոր կազմակերպությունների հետ եւ այդ համագործակցությունը կոնկրետ արդյունքներ է տալիս:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՄԵՐ ԸՆՏՐԱԾ ՈՒՂԻՆ ՃԻՇՏ Է ԵՎ ՏԱՆՈՒՄ Է ԴԵՊԻ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱՁԵՑՈՒՄ»

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու հավաստմամբ, բիզնես միջավայրի կարգավորման ուղղությամբ աշխատանքներն սկսվեցին իշխանության գլուխ գալու առաջին իսկ օրվանից:

«Մենք հիշում ենք, թե ինչպես տարիներ շարունակ խախտվում էր սեփականության իրավունքը, երբ առաջին ատյանի դատարանի որոշմամբ, գույքն անցնում էր պետական սեփականության ներքո: Եվ եթե տեսականորեն անգամ ընդունեինք, որ գործարարը կարող էր դատական հայցը շահել պետության դեմ, միեւնույն է, նրա գույքը արդեն վաճառված էր լինում: Հեղափոխական փոփոխություններից մեկը, որը մենք կատարեցինք օրենսդրությունում, այն է, որ մինչեւ դատավարության ավարտը, մասնավոր սեփականության հասցեով բռնի միջոցները չէին կիրարկվելու: Կարեւոր փոփոխություն էր նաեւ այն, որ, առանց դատարանի որոշմամբ, կատարողական ծառայությունը իրավունք չունի բռնագրավել գույքը, իսկ հարկային ստուգումները իրականացնելու է միայն հարկային մարմինը»,- ընդգծեց ֆինանսների նախարարը:

Նոդար Խադուրու խոսքերով, ֆինանսական միջազգային ինստիտուտներն ընտրությունները չեն ընկալում որպես գործարարության ռիսկի գործոն: «Ընտրությունների տարում երբեք նման ներդրումային ծավալ չի եղել: Առաջին եռամսյակում դրա աճը կազմեց 103 տոկոս: Պայմանագրերը, որոնք կնքվել են, այդ թվում՝ նաեւ օտարերկրյա ներդրողների հետ, հաստատում են, որ լուրջ ներդրումային գործընթացը շարունակվում է»,- ընդգծեց Նոդար Խադուրին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԵՆՔ ՀԱՐԳԵԼ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ»

Մեկնաբանելով Վանո Մերաբիշվիլու գործով մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը՝ Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարեց, որ պետք է սովորենք հարգել դատարանի որոշումը:

«Արդեն չորս տարի է անցել, ժամանակն է, որ Վրաստանում ընդունեն, որ երբ դատավորը հայտարարում է իր որոշումը, թեկուզեւ անցանկալի, պետք է հարգել, քանի որ նա այդ լիազորությունն ունի»,- ասաց Ծուլուկիանին եւ հավելեց, որ վրացական դատավարությունում շատ որոշումներ են ընդունվել, որոնք անձամբ իրեն դուր չեն եկել: «Սակայն, այսօր հաստատվել է այն ժամանակը, երբ արդարադատության նախարարը, արդարադատության նախարարությունը կարող է դատարանում պարտություն կրել: Ըստ երեւույթին, սխալներ կան եւ կարծում եմ, որ դրանք չորս-հինգ տարի հետո վերջնականապես կկարգավորվեն»,- ընդգծեց նախարարը:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՄԱՈՒՂՂԱՓԱՌ ԺՈՂՈՎԻՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ

Վրաց Ուղղափառ եկեղեցին չի մասնակցի Կրետե կղզում կայանալիք Համաուղղափառ ժողովին, ինչի պատճառն այն է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքարանն անտեսում է իրենց համար կարեւոր շատ հարցեր:

Այդ մասին, Թբիլիսիում տեղի ունեցած Սուրբ սինոդի նիստից հետո, հայտարարել է միտրոպոլիտ Զոսիմա Շիոշվիլին.

«Մեզ համար կարեւոր հարց էր Ուղղափառ եկեղեցիների ցուցակը: Վրաց եկեղեցին, հունական այդ ցուցակի համաձայն, չի զբաղեցնում իրեն բնորոշ տեղը: Բացի այդ, անտեսվել են մեզ համար կարեւոր համարվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են եկեղեցական օրացույցը, ամուսնությունն կնքելու հարցը, որոնք վրացական կողմը բարձրացրել է ակտիվորեն: Մենք հաշվարկել ենք, որ ճիշտ կլինի ժողովին մասնակցելուց զերծ մնալը: Եթե ժողովն ընդունի այնպիսի փաստաթղթեր, որոնք ընդունելի լինեն, ապա վրաց եկեղեցին կընդունի դրանք:

Ժողովի արդյունքները ցույց կտան, թե որքան կանոնակ կլինեն նրա ընդունած արդյունքները: Մենք կդիտարկենք, եւ, եթե դրանք ընդունվեն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կողմից, ապա դրանք կլինեն օրինական, իսկ եթե՝ ոչ, ապա դրանք չեն լինի իրագործման համար պարտադիր»:



ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանի սպորտի նախարար Տարիել Խեչիկաշվիլին այցելեց Ասպինձա եւ Ախալցիխե, դիտեց տեղում գործող մարզական օբյեկտները:

Մասնավորապես, նախարարը Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Ակակի Մաճուտաձեի, տեղական իշխանության մյուս ներկայացուցիչների հետ եղավ Ասպինձայի ռեգբիի բազայում եւ ծանոթացավ բազա տանող ճանապարհի շինարարության ընթացքի հետ: Այդ աշխատանքներն իրականացնում է մունիցիպալային զարգացման հիմնադրամը:

Նախարարը դիտեց նաեւ Ասպինձայում վերջերս վերոնորոգված ըմբշամարտի դահլիճը:

Ախալցիխեում Տարիել Խեչիկաշվիլին եղավ տեղի մարզական համալիրում, հանդիպում ունեցավ տեղի մարզիկների ու մարզիչների հետ:

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

2016 թվականի հունվար-մայիս ամիսներին Վրաստանի տասը խոշորագույն առեւտրական գործընկերներին բաժին է ընկնում երկրի արտաքին ապրանքաշրջանառության ողջ ծավալի 68 տոկոսը: Վրաստանի խոշորագույն առեւտրական գործընկերներն են՝ Թուրքիան (621 միլիոն ԱՄՆ դոլար), Կանադան (458 միլիոն ԱՄՆ դոլար) եւ Ռուսաստանը (322 միլիոն ԱՄՆ դոլար):

2016 թվականի հունվար-մայիս ամիսներին ապրանքային խմբերում արտահանման տասնյակում առաջին տեղը զբաղեցնում են պղնձի եւ բաղադրիչների հումքը, որը կազմում է 127 միլիոն ԱՄՆ դոլար՝ արտահանման ողջ ծավալի 16 տոկոսը: Ֆերրոհամաձուլվածքների արտահանումից ստացվել է 66 միլիոն ԱՄՆ դոլար, ընդհանուր ծավալի 8 տոկոսը: Երրորդ տեղում մարդատար ավտոմեքենաների արտահանումն է: Ապրանքային այդ խմբի արտահանումից ստացվել է 63 միլիոն ԱՄՆ դոլար:

ԷՐՈՍԻ ՔԻԾՄԱՐԻՇՎԻԼԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԳՈՐԾԵԼ

Վրաստանի դատախազությունը դադարեցրեց Էրոսի Քիծմարիշվիլու մահվան հետ կապված գործի քննությունը: Ինչպես նշեցին գերատեսչությունում, գործը, որը հարուցվել էր ինքնասպանությանը հասցվելու հոդվածով, հետաքննության տվյալներով, հիմնավորում չի ստացել: Հետեւողական եւ տրամաբանական վերլուծությունը ցույց է տվել, որ Էրոսի Քիծմարիշվիլին նպատակամղվածորեն ոչ ոք ինքնասպանության չի հասցրել եւ ոչ ոք նրան չի սպանել: Նա ինքնասպան է եղել: «Կոնկրետ հանգամանքները ցույց են տալիս, որ այլ անձի կողմից սպանություն չի կատարվել, հետեւաբար որոշում է ընդունվել դադարեցնել սույն քրեական գործը»,- ասված է դատախազության հայտարարության մեջ:

ՀՐԱԶԵՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ

Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի հինգ բնակիչ ոստիկանությանը կամավոր հանձնել է հրազեն եւ զինամթերք: Ընդհանուր առմամբ, հանձնվել է 4113 մարտական փամփուշտ, 3,7 կիլոգրամ տրոտիլ, 75 նռնակ, 6 կարճափող հրացան, մեկ ինքնաշեն ատրճանակ, մեկ ինքնաձիգ, 15 ական եւ այլ զինամթերք:

ՄՐՑՈՒՅԹ

TBC ԲԱՆԿԻ ԵՎ ՋԵՈՍԵԼԻ ԲԻԶՆԵՍ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժառիթ, որպեսզի է'լ ավելիին հասնեն, իսկ մյուս կողմից՝ խրախուսանք եւ ազդակ հաղորդել, որպեսզի օգտագործեն երկրում առկա բազմերանգ հնարավորությունները, վերլուծեն առաջընթացն ու զարգացնեն իրենց գործարարությունը:

Բիզնես պարգեւատրմանը կարող է մասնակցել ցանկացած ընկերությունը, որը գործում է Վրաստանում, գրանցվել է մինչեւ 2016 թվականը եւ որի տարեկան շրջանառությունը չի գերազանցում 10 միլիոն լարին: Հաղթողները կներկայացվեն հետեւյալ անվանակարգերում:

* Տարվա զբոսաշրջության բիզնես
* Տարվա ագրոբիզնես
* Տարվա վրացական արտադրանք
* Տարվա նորարարական բիզնես
* Տարվա մարկետինգային ընկերություն
* Տարվա փոքր բիզնես
* Տարվա բիզնես

«Տարվա զբոսաշրջության բիզնես» անվանակարգում կարող է ընտրվել ցանկացած գործարարությունը, որի սպասարկման հիմնական ուղղությունը տեղական կամ օտարերկրյա զբոսաշրջիկներն են եւ, որը որոշակի ճանաչման է արժանացել նրանց կողմից: Հավակնորդի գնահատմանը ուշադրություն կհատկացվի սպառողների կողմից հանրայնորեն վավերացված գնահատականը, միջազգային վարկանիշային ընկերության կողմից շնորհված վարկանիշը, հոդվածները կամ սյուժեները տեղական եւ օտարերկրյա լրատվամիջոցներում, սոցիալական ցանցում, ընկերության կայքէջի ժողովրդականացումը, տարբեր մրցույթներում ստացված պարգեւները եւ այլն:

«Տարվա ագրոբիզնես» անվանակարգում մասնակցել կարող է ցանկացած գործարարությունը, որի գործունեության հիմնական ուղղությունը գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունն է, պահպանումը, բաշխումը կամ վերամշակումը: Նշանակալից է, որ արտադրանքը մեծ մասամբ արտադրված կամ վերամշակված լինի Վրաստանում: Առաջնահերթությունը կտրվի այնպիսի ընկերությանը, որը արտադրանքը արտադրում է համապատասխան ինդուստրիայի միջազգային չափորոշիչների պահպանմամբ:

«Տարվա վրացական արտադրանք» անվանակարգում կարող է մասնակցել ցանկացած ոլորտի գործարարությունը, ներկայացնել ցանկացած այնպիսի արտադրանքը, որը ստեղծվել, ներդրվել կամ զարգացել է Վրաստանում: Արտադրանքում նկատի է առնվում ինչպես նյութական (սննդամթերք, խաղալիք, հագուստ եւ այլն), այնպես էլ՝ ոչ նյութական (տեսագրություն, կայքէջ, կինոնկար եւ այլն) ապրանքը: Գնահատմանն ուշադրություն կհատկացվի այնպիսի գործարարությանը, որն իր արտադրանքը արտահանում է եւ այդ արտադրանքի արտահանումը մինչ այդ չէր իրականացվում: Նշանակալից է, թե միանշանակ է եղել, արդյոք, հավակնորդի գործարարության կողմից իրականացված արտահանումը եւ, ինչ միջոցառումներ է իրականացրել նա նոր շուկայում հաստատվելու համար, որքանով է ավելացրել նպատակային շուկայի բաժինը եւ արտահանման ինչ ներուժ ունի:

«Տարվա նորարարական բիզնես» անվանակարգում մասնակցել կարող է այնպիսի գործարարությունը, որը ստեղծել, ներդրել կամ զարգացրել է այնպիսի տեխնոլոգիական նորույթներ կամ հայտնագործություններ, որոնք ունեն կոմերցիոն ներուժ կամ որոշակի սոցիալական ծանրաբեռնվածություն: Տեխնոլոգիական նորարարությունը կարող է լինել ինչպես արտադրանքի, այնպես էլ՝ սպասարկման կամ գործընթացին առնչվող: Հնարավոր է, տեխնոլոգիական նորարարությունը չլինի համաշխարհային մասշտաբով բացառիկ, սակայն լինի Վրաստանի կամ այն տարածքի համար նորարական, որտեղ ստեղծվել, ներդրվել կամ զարգացել է:

«Տարվա մարկետինգային ընկերություն» անվանակարգին կարող է մասնակցել ցանկացած գործարարությունը, որը իրականացրել է մարկետինգային այնպիսի արշավ, որի արդյունքում բիզնես բրենդ արտադրանքը արժանացել է որոշակի ժողովրդականության սպառողների կողմից, ինչը արտահայտվել է սպառողների թվաքանակության եւ վաճառված ծավալի նշանակալի աճով:

«Տարվա փոքր բիզնես» անվանակարգում կարող է մասնակցել ցանկացած ոլորտի գործարարությունը, որի շրջանառությունը չի գերազանցում 1,5 միլիոն լարին, որը որոշակի հաջողության է հասել բիզնես զարգացման տեսանկյունից եւ, չնայած փոքր չափերին, կարողացել է գրավել սպառողների համակրանքը:

Հանձնաժողովը կհայտնաբերի նաեւ **«Տարվա բիզնես»** անվանակարգի հաղթողին: Գնահատմանը հանձնաժողովի անդամները կառաջնորդվեն այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են գործարարության առանձնակի ձեռքբերումները եւ այդ առաջընթացը պատկերող հետաքրքիր պատմությունները, գործարարությունը, որի ղեկավարներն են երիտասարդները եւ, ովքեր ունեն միջազգային զարգացման ներուժ: Անվանակարգում հաղթողը մեկ տարով կդառնա TBC բիզնեսի դեսպանը եւ կմասնակցի տարբեր միջոցառումներին:

«Տարվա մարկետինգային ընկերություն» անվանակարգում հաղթողը կհայտնաբերվի էլեկտրոնային կարգով համընդհանուր քվեարկության սկզբունքով: Մյուս բոլոր անվանակարգերում հաղթողը կհայտնաբերվի էկոնոմիկայի տարբեր ոլորտների փորձագետներից կազմված հանձնաժողովի կողմից: «Տարվա բիզնես» անվանակարգում հաղթողը կընտրվի, ընդհանուր առմամբ, մուտք գործած հայտերով, իսկ մնացած անվանակարգերում հաղթողները կճանաչվեն դրանցից յուրաքանչյուրում ընտրված եզրափակչի երեք մասնակիցներից, որոնց գործունեությունը հասարակայնությանը կներկայացվի լրատվամիջոցների եւ սոցիալական մեդիայի միջոցով:

Մրցույթին մասնակցել ցանկացողների հայտերի ընդունումը սկսվել է հունիսի 21-ին եւ կշարունակվի մինչեւ օգոստոսի 15-ը, իսկ հաղթողների պարգեւատրման արարողությունը կանցկացվի նոյեմբերին: Հայցը ընդունվում է օնլայն կարգով՝ հետեւյալ հասցեով. www.Businessaward.ge

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

ԿՃԱՆԱՉԻ՞, ԱՐԴՅՈՔ, ԵՐԵՎԱՆԸ ՕՍԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչո՞ւ են օսերը որոշել ճանաչել հայերի ցեղասպանությունը, Երեւանը պատասխան ի՞նչ գործողություններ կձեռնարկի, մարշալ Բաղրամյանի ազգականները ի՞նչ են ասել Բաղրամյան գումարտակի անդամներին: Այս հարցերի շուրջ «Ախալի թառբա» զրուցեց նախկին պատգամավոր Վան Բայբուրթյանի հետ:

- Անցյալ շաբաթ Ցխինվալիի խորհրդարան ներկայացվեց հայց՝ տեղական հայ համայնքը պահանջում է հայերի Ցեղասպանության ճանաչում: Ի՞նչ կասեիք այդ կապակցությամբ:

- Այն, ինչ տեղի ունեցավ 1915 թվականին, բոլոր հայերիս մեծ ողբերգությունն է: Այս իմաստով բացառություն չեն կազմում Ցխինվալիում ապրող հայերը:

- Հարցը օրակարգ դրվեց դեռեւս անցյալ տարի: Երբ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ իրավիճակը սրվեց, մի քանի օս պատգամավորներ որոշեցին այդ ձեւով վրեժխնդիր լինել Թուրքիայից: Այդ մասին հենց իրենք էլ հայտարարեցին:

- Լավ կլիներ, եթե այս թեմայի շուրջ խոսակցությունը սկսեին նրանից, որ նրանք որոշակիորեն դատապարտում են եւ բռնությունը: Տվյալ պարագայում հարցը դրվում է մի փոքր այլ կերպ: Օսերը ցանկանում են շահել ռուսների համակրանքը: Մի որոշ ժամանակ նրանք այդ մասին ձայն չէին հանում: Սակայն Գերմանիայի կողմից հայոց Ցեղասպանության ճանաչումից անմիջապես հետո նրանք էլ վեր կացան ու ասացին, որ այդ հարցի քննարկումը իրենք էլ պիտի սկսեն:

- Ձեր կարծիքով, Հարավային Օսեթիայի խորհրդարանը կճանաչի՞ Ցեղասպանությունը:

- Չգիտեմ: Եթե ճանաչի, լավ կլինի: Այդ հարցի շուրջ Թուրքիայում էլ արդեն խոսակցություններ են գնում: Անցած ապրիլին Թուրքիայի խորհրդարանում ելույթ ունեցավ պատգամավոր Գարո Փայլանը, որը խոսեց այդ թեմայի շուրջ: Ասեմ ավելին, 450 պատգամավոր ընդգրկող խորհրդարանում ոչ մեկի մտքով անգամ չանցավ, որ նրա խոսքը ընդհատեր...

- Փայլանը հա՞յ է:

- Հայ է: Նշեմ, որ 1915 թվականի Ցեղասպանության մասին, չկիրարկելով «Ցեղասպանություն» բառը, այլ օգտագործելով «ողբերգական իրադարձություններ» արտահայտությունը, անցյալ տարի եւ այս տարվա ապրիլին խոսեց Թուրքիայի նախագահը: Ստամբուլում հայերը այդ կապակցությամբ հանրահավաք էլ անցկացրին: Մասնակիցներին դիմեց Ստամբուլի քաղաքապետը եւ ողբերգալի այդ իրադարձությունների կապակցությամբ իր վշտակցությունն արտահայտեց: Դա նշանակում է, որ Թուրքիայում այդ թեման բարձրաձայնվեց: Ժամանակին Գերմանիան էլ ճանաչեց հրեաների Հոլոքոսթը եւ դրանով այդ երկիրը ոչինչ չկորցրեց, ընդհակառակը՝ արժանապատվություն ձեռք բերեց:

- Ցխինվալիի խորհրդարանի պատգամավոր Դմիտրի Գասիեւը հայտարարեց, որ իրենք հուսով են, որ Երեւանն էլ պատասխան քայլ կկատարի:

- Ես չգիտեմ, թե նրանք ինչ նկատի ունեն պատասխան քայլ ասելով, եթե հուսով են, որ Հայաստանը կճանաչի Հարավային Օսեթիայի անկախությունը, ապա նման բան չի լինի:

- Գասիեւը հույս ունի, որ հայերը կճանաչեն վրացիների կողմից օսերի ցեղասպանությունը: Այդ մասին կարո՞ղ է խոսք լինել:

- Երեւանում այդ մասին հարց անգամ չի դրվի: Հայաստանը վրաց պետականության դեմ երբեք չի գնա: Երեւանը Ցխինվալիի հետ ոչ մի կապեր չունի եւ, բնականաբար, այդ թեմայով նրանց միջեւ խոսակցություն չի եղել:

- Վերջերս Հարավային Օսեթիայի խորհրդարանի նախագահը հանդիպում ունեցավ Հայաստանի իշխանության ներկայացուցիչների հետ:

- Ցխինվալիի պատվիրակության անդամները ռեստորանում են հանդիպել Հայաստանի իշխանության ներկայացուցիչների հետ: Նրանց խորհրդարանի նախագահը հայերի հետ լուսանկարը նկարահանել է բջջային հեռախոսով: Հայերը անգամ չգիտեին, թե ով է այդ մարդը: Երբ վերադարձան Ցխինվալի, լուսանկարը հրապարակեցին: Դրանից լավ օգտվեց այն երկիրը, որը ձգտում է վրացիների եւ հայերի առճակատմանը: Ահագին աղմուկ բարձրացրին: Բարեբախտաբար, ամեն ինչ պարզվեց, եւ այդ կապակցությամբ Թբիլիսիում հարցեր չծագեցին:

- Հարցեր վերջերս ծագեցին, հայկական պատվիրակությունը չպաշտպանեց ՄԱԿ-ի բանաձեւը, որով պահանջվում էր վրաց փախստականների վերադարձը Աբխազիա եւ Սամաչաբլո:

- Այդ կապակցությամբ պաշտոնական Թբիլիսին հարցեր չի բարձրացրել: Մեր իշխանությունը հիանալի քաջատեղյակ է, թե ինչո՞ւ է այդպես վարվել հայկական պատվիրակությունը: Այդ բանաձեւի պաշտպանության դեպքում օրակարգի հարց կդառնար փախստականների վերադարձը Լեռնային Ղարաբաղ, ինչն էլ ավելի կսրի իրավիճակը: Ուստիեւ հարցեր չեն ծագել, եւ ոչ մեկը բողոք չի ներկայացրել:

Բողոք եւ հարցեր չեն ծագի նաեւ այն դեպքում, եթե օսերը ճանաչեն հայերի Ցեղասպանությունը: Այն, ինչ տեղի ունեցավ 1915 թվականին, ոչ մի տեղ չպետք է կրկնվի: Դա ոչ միայն հայ ժողովրդի ողբերգությունն է: Չեմ բացառում, որ այդ մասին երբեւէ Վրաստանում էլ սկսվեն քննարկումներ:

- Քանի դեռ Թուրքիան մեր ռազմավարական գործընկերն է, այդ մասին, հավանաբար, խոսակցություն չի լինի:

- Պաշտոնական Երեւանը լավ հասկանում է, որ Թուրքիան մեր ռազմավարական գործընկերն է, այդ պատճառով էլ երբեք չեն պահանջել Ցեղասպանության ճանաչում: Սակայն, քանի որ այդ թեմայի շուրջ Թուրքիայում էլ արդեն խոսակցություններ են տարվում, հնարավոր է, այստեղ էլ տեղաշարժեր լինեն: Ցեղասպանության թեման Վրաստանի համար էլ ցավագին է: Արդեն որքան ժամանակ է Վրաստանը ձգտում է ապացուցել, որ Աբխազիայում վրացիների նկատմամբ տեղի է ունեցել էթնիկական զտում...

- Վրացիների էթնիկական զտման գործում մասնակցել է նաեւ Բաղրամյան գումարտակը, որը համալրված էր ազգությամբ հայերով:

- Այդ գումարտակի հետ աբխազների կողմից կռվող ազգությամբ վրացիներ էլ կային: Աբխազիայում սարսափելի շատ բաներ կատարվեցին եւ չգիտես ինչու այդ ամենը վերագրվեց Բաղրամյան գումարտակին: Այդ թեման շահարկում է նաեւ մեր հարեւան երկրներից մեկը: Նրանք այնպես են ներկայացնում, որ Վրաստանը պատերազմում պարտություն կրեց ոչ թե ռուսական բանակից, այլ կոնկրետ մի գումարտակից, իսկ դա այդպես չէ, Բաղրամյան գումարտակի գործողությունները դուր չեկան նաեւ շատ ուրիշ հայերի, սակայն ոչինչ չկարողացան անել, պատերազմում ամեն ինչ պատահում է:

Երբ մարշալ Բաղրամյանի ազգականները իմացան, որ վրացիների դեմ կռվող գումարտակին տրվելու է նրա անունը, մեծ աղմուկ բարձրացրին, անգամ նամակներ ուղարկեցին, սակայն ոչնչի չհասան: Այն ժամանակ հայկական գումարտակի առաջին պլան մղումը պայմանավորված էր այլ նպատակներով: Առանձին ուժեր ցանկանում էին, որ Ջավախեթիում էլ սկսվեին խառնակություններ, սակայն վրացիներն ու հայերը ողջախոհություն ցուցաբերեցին եւ չառերեսվեցին միմյանց:

ՇՈՐԵՆԱ ՄԱՐՍԱԳԱՇՎԻԼԻ

«Ախալի թառբա», N 145, 21 հունիսի